ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արտիմետ, (093) 459547, (093) 186297, artimet.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈՒԼԻՍԻ 2016թվականի N 23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 7 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության 12-րդ հոդվածի հինգերորդ մասով.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի ավագանու 2016 թվականի հուլիսի 18-ի թիվ 7 նիստի օրակարգը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
2. ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ
3. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՌՈՒԾԱՆՅԱՆ ԱՐՏԱԿ
5. ՍԵԴՐԱԿՅԱՆ ՆԵԼՍՈՆ
6. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՆՎԱՐԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԶԱՎԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 18-Ի
N 23 ՈՐՈՇՄԱՆ

ՕՐԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 18-Ի N 7 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ:

/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Զ. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ/

2. ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Զ. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ/

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Զ. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ/

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Զ. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ/

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Զ. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ/

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Զ. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ/

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ:

/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Զ. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ/

8. ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Մ. ՍԱՀԱԿՅԱՆ/

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արտիմետ, (093) 459547, (093) 186297, artimet.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈՒԼԻՍԻ 2016թվականի N 24

ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 16-րդ հոդվածի հինգերորդ մասով.

1. Բաժին 06 խումբ 4 դաս 1 5112 հոդվածից 980000 /ինը հարյուր ութսուն հազար/ դրամ գումար փոխանցել Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի կենտրոնական փոխոցի լուսարձակները նորով փոխարինելու համար:

2. Բաժին 09 խումբ 1 դաս 1 5122 հոդվածից 810000 /ութ հարյուր տաս հազար/ դրամ փոխանցել մանկապարտեզի համար կահույք՝ մանկական սեղաններ և աթոռներ ձեռք բերելու համար:

3. Բաժին 01 խումբ 1 դաս 1 4269 հոդվածից 96600 / ինսունվեց հազար վեց հարյուր/ դրամ փոխանցել ,Բութան ե ՍՊԸ-ին հակակարկտային հեղուկ գազի համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
2. ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ
3. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՌՈՒԾԱՆՅԱՆ ԱՐՏԱԿ
5. ՍԵԴՐԱԿՅԱՆ ՆԵԼՍՈՆ
6. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՆՎԱՐԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԶԱՎԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արտիմետ, (093) 459547, (093) 186297, artimet.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈՒԼԻՍԻ 2016թվականի N 25 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Գույքահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի երրորդ մասին և <<Հողի հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածին համապատասխան.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի ավագանու կողմից գույքահարկի և հողի հարկի արտոնություններ սահմանելու կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
2. ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ
3. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՌՈՒՇԱՆՅԱՆ ԱՐՏԱԿ
5. ՍԵԴՐԱԿՅԱՆ ՆԵԼՍՈՆ
6. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՆՎԱՐԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԶԱՎԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 18-Ի
N 25 Ա ՈՐՈՇՄԱՆ

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում են «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածին և «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի ավագանու /այսուհետ՝ **համայնքի ավագանու**/ կողմից գույքահարկի և հողի հարկի արտոնությունների սահմանման հետ կապված հարաբերությունները:

2. Համայնքի ավագանին գույքահարկի և հողի հարկի արտոնություն է սահմանում առանձին հարկ վճարողների համար համայնքի վարչական տարածքում գտնվող (հաշվառված) և գույքահարկով ու հողի հարկով հարկվող օբյեկտ հանդիսացող գույքի և հողի մասով՝ արտոնության վերապահման տարվա համայնքի բյուջեի հաստատումից հետո:

3. Հարկ վճարողներին գույքահարկի և (կամ) հողի հարկի արտոնություն կարող է սահմանվել՝

1) համայնքի ղեկավարի կամ համայնքի ավագանու անդամի նախաձեռնությամբ.

2) հարկ վճարողի հայցմամբ՝ համայնքի ղեկավարի եզրակացությամբ:

4. Այն դեպքում, երբ արտոնությունը սահմանվում է համայնքի ղեկավարի կամ համայնքի ավագանու անդամի նախաձեռնությամբ, նախաձեռնողը համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացնում գույքահարկի և (կամ) հողի հարկի գծով արտոնություն սահմանելու վերաբերյալ առաջարկությունը՝ նշելով հարկային օրենսդրությամբ նախատեսված հարկային արտոնության տեսակը և հայցվող արտոնության գումարի մեծությունը՝ հարկային արտոնություն տալու անհրաժեշտության հիմնավորմամբ:

5. Այն դեպքում, երբ արտոնությունը հայցվում է հարկ վճարողի կողմից, հարկ վճարողը համայնքի ղեկավարին է ներկայացնում գույքահարկի և (կամ) հողի հարկի գծով արտոնություն ստանալու վերաբերյալ դիմում՝ նշելով հարկային օրենսդրությամբ նախատեսված հարկային արտոնության տեսակը և հայցվող

արտոնության գումարը՝ հարկային արտոնություն ստանալու անհրաժեշտության հիմնավորմամբ:

Արտոնություն հայցող կազմակերպությունների կողմից համայնքի ղեկավարին ներկայացվում են նաև՝

1) տեղեկություններ՝ առաջացած հարկային պարտավորությունը ժամանակին կատարելու անհնարինության մասին հիմնավորմամբ.

2) տեղեկություններ տույժերի ու տուգանքների առաջացման մասին, որոնք պետք է պարունակեն դրանց առաջացման պատճառները:

6. Համայնքի ղեկավարը հարկ վճարողի դիմումը և սույն կարգի 5-րդ կետում նշված անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո՝

1) հարկային արտոնության տրամադրմանը համաձայնելու դեպքում՝ մեկամսյա ժամկետում ճշտում է դրանց արժանահավատությունը, հաշվարկում հարկային արտոնության գումարի մեծությունը և իր կարծիքը, ինչպես նաև հարկային արտոնություններ տալու վերաբերյալ հարկ վճարողի ներկայացրած փաստաթղթերը ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը.

2) հարկային արտոնության տրամադրմանը չհամաձայնելու դեպքում հայցողի ներկայացրած փաստաթղթերը վերադարձնում է հարկ վճարողին՝ գրավոր նշելով չհամաձայնելու պատճառները, փաստական և իրավական հիմքերը:

7. Եթե հարկ վճարողը սույն կարգի 5-րդ կետում նշված փաստաթղթերը ներկայացնելուց հետո մեկամսյա ժամկետում համայնքի ղեկավարից չի ստանում հարկային արտոնության տրամադրմանը չհամաձայնելու մասին գրավոր պատասխան կամ իր փաստաթղթերը համայնքի ավագանուն ուղարկելու վերաբերյալ գրություն կամ եթե հարկ վճարողը համաձայն չէ հարկային արտոնության տրամադրմանը համայնքի ղեկավարի չհամաձայնելու մասին հիմնավորումներին, ապա 20-օրյա ժամկետում համայնքի ղեկավարին ներկայացված դիմումի կրկնօրինակը՝ սույն կարգի 5-րդ կետում նշված փաստաթղթերի հետ միասին, իսկ արտոնության տրամադրմանը համայնքի ղեկավարի չհամաձայնելու վերաբերյալ գրավոր պատասխանի առկայության դեպքում՝ այդ պատասխանի վերաբերյալ իր առարկությունները և ավագանուն ուղղված դիմումը ներկայացնում է վերջինիս քննարկմանը:

8. Համայնքի ավագանին սույն կարգի 5-րդ կամ 7-րդ կետերում նշված անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց, ինչպես նաև իր նախաձեռնությամբ արտոնության տրամադրման դեպքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հարցը քննարկելուց հետո ընդունում է որոշում հարկ վճարողին գույքահարկի կամ հողի հարկի արտոնություն տրամադրելու կամ արտոնության հարցը մերժելու վերաբերյալ:

9. Համայնքի ավագանու որոշման մեջ նշվում են՝

1) հարկ վճարողի գրանցման և գույքի գտնվելու հասցեները, հարկ վճարողի անվանումն ու հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), ֆիզիկական անձի սոցիալական ապահովության քարտի համարը.

2) հարկային օրենսդրությամբ սահմանված՝ տրամադրվող արտոնության տեսակը.

3) արտոնության գումարի մեծությունը, իսկ հարկի ժամկետային արտոնության տրամադրման դեպքում՝ հետաձգման ժամկետները:

10. «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով և «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված չափի հաշվարկման նպատակով՝

1) հարկվող օբյեկտի, հարկի դրույքաչափի կամ հարկի նվազեցման գծով արտոնություն սահմանելիս, արտոնության գումարը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով տեղական ինքնակառավարման մարմիններում հաշվառման տվյալների հիման վրա հաշվարկված հարկի գումարները, իսկ եթե դա անհնարին է, ապա հիմք ընդունելով տեղական ինքնակառավարման մարմիններում հարկ վճարողի նախորդ հաշվետու ժամանակաշրջանի հաշվառման տվյալների հիման վրա հաշվարկված հարկի գումարների մեծությունը.

2) հարկի հաշվարկման կամ վճարման ժամկետի, ինչպես նաև հարկային օրենսդրությունը և Հայաստանի Հանրապետության հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերը խախտելու համար հաշվարկված հարկային օրենսդրությամբ սահմանված տույժերի ու տուգանքների վճարման ժամկետի գծով արտոնություն սահմանելիս, տվյալ բյուջետային տարում արտոնության գումարը հաշվարկվում է հետաձգվող հարկային պարտավորության գումարի նկատմամբ տվյալ բյուջետային տարվա ընթացքում արտոնության մնացած ժամանակահատվածի համար հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հարկի գումարի նկատմամբ հաշվարկվող տույժերի գումարի չափով:

11. Համայնքի ավագանու կողմից սույն կարգով չնախատեսված կարգով արտոնությունների սահմանումն արգելվում է, այդ թվում նաև՝ հարկ վճարողների հարկային պարտավորությունների կատարման համար համայնքի բյուջեից փոխհատուցում տրամադրելու միջոցով:

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Արտիմետի-
գյուղապետարանի աշխատակազմի
քարտուղար Գ. Մովսիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արտիմետ, (093) 459547, (093) 186297, artimet.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈՒԼԻՍԻ 2016թվականի N 26-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ>> ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը ավագանիին.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիներին <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի պատվավոր քաղաքացի>> կոչում շնորհելու կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող 10-րդ օրը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
2. ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ
3. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՌՈՒԾԱՆՅԱՆ ԱՐՏԱԿ
5. ՍԵԴՐԱԿՅԱՆ ՆԵԼՍՈՆ
6. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՆՎԱՐԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԶԱՎԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 18-Ի
N 26-Ն ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ « ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ

1. Սույնով սահմանվում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիներին (հետագայում՝ քաղաքացիներ) « Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ-համայնքի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու կարգը:

2. « Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի պատվավոր քաղաքացի» կոչումը պատվավոր կոչում է՝ նախատեսված «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

3. « Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի պատվավոր քաղաքացի» կոչումը շնորհվում է Արտիմետ համայնքի ավագանու կողմից, համայնքի ղեկավարի առաջարկությամբ՝ սույն կարգին համապատասխան:

4. « Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի պատվավոր քաղաքացի» կոչմանը կարող են արժանանալ, անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, գույքային և այլ դրությունից, այն քաղաքացիները, որոնք իրենց երկարամյա անբասիր աշխատանքով և (կամ) բացառիկ մեծ վաստակով նպաստել են Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի բարգավաճմանը, ակնառու ներդրում ունեն համայնքի տնտեսական, մշակութային զարգացման գործում, իրենց կյանքում ու անցած ուղով նպաստել են ժողովուրդների բարեկամության և խաղաղության հաստատմանը, անուրանալի ավանդ ունեն մշակույթի, արվեստի, գրականության կամ գիտության զարգացման բնագավառում:

5. « Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու գրավոր առաջարկով կարող են հանդես գալ Հայաստանի Հանրապետությունում գրանցված հասարակական միավորումները, հիմնադրամները, իրավաբանական անձանց միությունները, հասարակության լայն զանգվածները և մշակութային, կրթական, գիտական կազմակերպությունները, Հայ Առաքելական եկեղեցին, պետական կառավարման մարմինները, որոնք պարտավոր են հիմնավորել իրենց առաջարկը, համակողմանիորեն լուսաբանել «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ

համայնքի պատվավոր քաղաքացի» կոչմանը ներկայացվող քաղաքացու կյանքը, գործունեությունը, ներկայացնել համապատասխան նյութեր և քաղաքացու լուսանկարը:

6. Ստացված առաջարկությունները ներկայացվում են Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի ղեկավարին:

7. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի ղեկավարի առաջարկությամբ համայնքի ավագանին որոշում է ընդունում « Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին:

8. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի պատվավոր քաղաքացուն, հանդիսավոր պայմաններում հանձնվում է « Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի պատվավոր քաղաքացու» կոչում շնորհելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի պատվավոր քաղաքացու վկայականը:

9. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի պատվավոր քաղաքացու անունը գրանցվում է Արտիմետ գյուղապետարանում պահվող, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի պատվավոր քաղաքացիների հաշվառման հատուկ գրքում:

10 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի. պատվավոր քաղաքացուն հանձնվող վկայականի և հաշվառման հատուկ գրքի ձևերը հաստատում է համայնքի ավագանին:

11. « Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին համայնքի ավագանու որոշումը և համայնքի պատվավոր քաղաքացու կյանքը և գործունեությունը պարտադիր լուսաբանվում է զանգվածային լրատվության միջոցներով:

12. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի ավագանու որոշումներով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի պատվավոր քաղաքացիների համար կարող են սահմանվել արտոնություններ:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Արտիմետ համայնքի գյուղապետարանի
աշխատակազմի քարտուղար Գ. Մովսիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արտիմետ, (093) 459547, (093) 186297, artimet.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈՒԼԻՍԻ 2016թվականի N 27-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասի>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի ղեկավարի առաջարկությունը.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
2. ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ
3. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՌՈՒԾԱՆՅԱՆ ԱՐՏԱԿ
5. ՍԵԴՐԱԿՅԱՆ ՆԵԼՍՈՆ
6. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՆՎԱՐԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԶԱՎԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 18-Ի
N 27-Ն ՈՐՈՇՄԱՆ

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույնով սահմանվում են Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի (այսուհետ՝ համայնք) ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացման կարգը:
2. Համայնքի՝ իր անունից և իր պատասխանատվությամբ իրականացվող գործառույթներն՝ սեփական լիազորություններն, իրենց բնույթով բաժանվում են պարտադիր՝ նախատեսված օրենսդրությամբ, և կամավոր լիազորությունների: Համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունները սեփական լիազորությունների մասն են:
3. Կամավոր լիազորություններն իրականացվում են համայնքի բյուջեով նախատեսված հատկացումներին համապատասխան և համայնքի ավագանու կողմից սահմանած կարգով:
4. Սույն կարգում թվարկված կամավոր լիազորություններն սպառիչ չեն: «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքից բացի, այլ օրենքներով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունները համայնքը կարող է իրականացնել միայն որպես կամավոր լիազորություններ: Համայնքի ղեկավարը կարող է իրականացնել համայնքային շահերին վերաբերող, օրենքին չհակասող ցանկացած գործունեություն:

5. Համայնքի ղեկավարը, օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասության սահմաններում, համայնքի տարածքում կամավոր լիազորություններն իրականացնում է հետևյալ բնագավառներում՝

1) **պաշտպանության կազմակերպման**
2) **քաղաքաշինության և կոմունալ տնտեսության**
3) **հողօգտագործման**
4) **տրանսպորտի**
5) **կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների**
6) **առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի**
7) **աշխատանքի և սոցիալական պաշտպանության**

II. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ

6. Պաշտպանության կազմակերպման բնագավառում համայնքի ղեկավարը՝
   1) աջակցում է քաղաքացիական պաշտպանության մարմինների գործունեությանը.
   2) աջակցում է զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, ինչպես նաև զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծմանը.
   3) աջակցում է բնակչության, հատկապես երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակությանը:
7. Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում համայնքի ղեկավարը՝
   1) իրականացնում է բնակարանային և սոցիալական նշանակության այլ օբյեկտների շինարարությունը և կապիտալ վերանորոգումը.
   2) իրականացնում է կառուցապատման աշխատանքները.
   3) կազմում է <<Քաղաքաշինության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված, ըստ անհրաժեշտության մշակվող, քաղաքաշինական փաստաթղթերի նախագծերը.
   4) կազմակերպում է հանգստի վայրերի խնամքը և պահպանությունը.
   5) կազմակերպում է սանիտարական մաքրման կայանքների շինարարությունը և շահագործումը:

8. Հողօգտագործման բնագավառում համայնքի ղեկավարը՝
   1) իրականացնում է համայնքի սեփականություն համարվող հողամասերի բարելավման աշխատանքներ.
   2) իրականացնում է ներտնտեսային հողաշինարարական աշխատանքներ:
9. Տրանսպորտի բնագավառում համայնքի ղեկավարը՝
   1) կազմակերպում է համայնքային ենթակայության ճանապարհների, կամուրջների և ինժեներական այլ կառույցների շինարարությունը:
10. Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում համայնքի ղեկավարը՝
   1) աջակցում է արհեստների, ժողովրդական ստեղծագործության և գեղարվեստական ինքնագործունեության զարգացմանը.
   2) աջակցում է համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների պահպանությանը.
   3) հաշվառում, դասակարգում և տարածում է համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային, բնական և տուրիստական-ռեկրեացիոն ռեսուրսների մասին տեղեկատվությունը.
   4) աջակցում է երիտասարդության դերի բարձրացմանը.
   5) աջակցում է հանրակրթական դպրոցների գործունեությանը:
11. Առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում համայնքի ղեկավարը՝
   1) աջակցում է սանիտարական վիճակի բարելավմանը.
   2) աջակցում է առողջապահական մարմինների՝ սանիտարահիգիենիկ, հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների իրականացմանը.
   3) նպաստում է համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը, իրականացնում է սպորտային հրապարակների և մարզական այլ կառույցների շինարարություն, ստեղծում է հանգստի գոտիներ:
12. Աշխատանքի և սոցիալական ծառայության բնագավառում համայնքի ղեկավարը՝
   1) նպաստում է նոր աշխատատեղերի ստեղծմանը, կազմակերպում է վճարովի հասարակական աշխատանքներ.

2) միջոցներ է ձեռնարկում հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ:

13. Գյուղատնտեսության բնագավառում համայնքի ղեկավարը՝
    1) աջակցում է գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը.
    2) աջակցում է տոհմային և սերմնաբուծական աշխատանքներին:

III. ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

14. Համայնքի ղեկավարը, համայնքի բյուջեից ֆինանսավորում պահանջող կամավոր լիազորությունների իրականացման նպատակով, մինչև համայնքի տվյալ տարվա բյուջեի հաստատումը, համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում իրականացվելիք կամավոր լիազրությունների ցանկը և դրանց կատարման համար անհրաժեշտ ծախսերը:
15. Համայնքի ավագանին, ելնելով համայնքի բյուջեի հնարավորություններից, որոշում է բոլոր կամավոր լիազորությունների համար հատկացվող ընդհանուր գումարի և յուրաքանչյուր կամավոր լիազորության իրականացման համար անհրաժեշտ հատկացման չափը:
16. Հաշվետու տարվա ընթացքում կամավոր լիազորությունների ընդհանուր գումարի սահմաններում մի կամավոր լիազորության իրականացման նպատակով հատկացված գումարը կարող է համայնքի ավագանու որոշմամբ ուղղվել մեկ կամ մի քանի այլ կամավոր լիազորությունների իրականացման համար՝ ելնելով տարվա ընթացքում իրադրության փոփոխություններից:
17. Որոշակի կամավոր լիազորությունների իրականացման համար դրամական միջոցների համայնքի ղեկավարի կողմից նպատակային օգտագործումը համայնքի ավագանու պահանջով կարող է իրականացվել համապատասխան հանձնաժողովի եզրակացության հիման վրա: Սոցիալապես անապահով խավերին դրամական աջակցության ցուցաբերումը կարող է իրականացվել միայն համապատասխան հանձնաժողովի եզրակացության հիման վրա, որում ընդգրկվում են նաև ավագանու երկու անդամներ:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար՝ ***Գ. Մովսիսյան***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արտիմետ, (093) 459547, (093) 186297, artimet.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈՒԼԻՍԻ 2016թվականի N 28 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասին 20-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի ղեկավարի առաջարկությունը.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության տրամադրման (այսուհետ՝ գույքի վարձակալության) կանոնակարգը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի սեփականություն հանդիսացող ոչ բնակելի տարածքների համար գանձվող վարձավճարները՝ համաձայն հավելված 2-ի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
2. ՂԱՋԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ
3. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՌՈՒԾԱՆՅԱՆ ԱՐՏԱԿ
5. ՍԵԴՐԱԿՅԱՆ ՆԵԼՍՈՆ
6. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՆԿԱՐԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԶԱՎԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Արտիմետ համայնքի ավագանու 2016թ.
հուլիսի 18-ի N 28 Ա որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության տրամադրման (այսուհետ՝ գույքի վարձակալության) կանոնակարգը:

2. Գույքի վարձակալության դեպքում բացի գույքի վարձավճարի չափից այլ չափանիշներ ենթակա չեն սակարկման:

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության տրամադրման նպատակով համայնքի ղեկավարին ներկայացված հայտի ընդունման (չմերժելու) դեպքում, գույքի վարձակալության տրամադրման մրցույթի անցկացման վերաբերյալ առաջարկությունը ներկայացնում է համայնքի ավագանու հաստատմանը:

4. Գույքի վարձակալության մրցույթը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և սույն կանոնակարգին համապատասխան կազմակերպում և անցկացնում է մրցութային հանձնաժողովը /մրցույթի կազմակերպիչը/:

II. ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉԸ

5. Կազմակերպիչ պետք է լինեն առնվազն 5 հոգի:

6. Համայնքի ղեկավարի կողմից տրված գույքի վարձակալության մրցույթ կազմակերպելու վերաբերյալ համապատասխան հրահանգը ստանալուց հետո կազմակերպիչը հինգ աշխատանքային օրվա ընթացքում հաստատում է գույքի վարձակալության մրցույթի անցկացման մասին հրապարակային ծանուցման տեքստը և համապատասխան զեկուցագրով ներկայացնում է համայնքի ղեկավարին՝ հրապարակելու համար:

7. Սույն կանոնակարգի 6-րդ կետում նշված մրցույթի անցկացման մասին հրապարակային ծանուցմամբ սահմանված ժամկետում կազմակերպիչը ընդունում է

մրցույթի մասնակցության հայտերը , կազմում և անցկացնում է գույքի վարձակալության մրցույթը, ինչպես նաև որոշում գույքի վարձակալության մրցույթի հաղթողին:

8. Կազմակերպչի գործունեությունն իրավազոր է կազմակերպչի անդամների թվի 2/3-ի մասնակցության դեպքում: Մրցույթին մասնակցող անդամների թվի 2/3-ից պակաս լինելու դեպքում կազմակերպչի գործունեությունն իրավազոր չէ, որի մասին տեղեկացվում են մրցույթի անցկացման մասին հրապարակային ծանուցմամբ սահմանված ժամկետներում մրցույթի մասնակցության հայտ ներկայացրած բոլոր անձինք:

9. Կազմակերպիչն իրավասու է գույքի վարձակալության մրցույթի արդյունավետ իրականացման նպատակով գույքի վարձակալության մրցույթը նախապատրաստելու և կազմակերպելու համար ընդգրկել մասնագիտացված կազմակերպություն(ներ) (համաձայնությամբ):

10. Կազմակերպչի գործունեությունը համարվում է դադարած մրցույթի վերջնական արդյունքներն ամփոփելուց և այդ մասին արձանագրություն կազմելուց և համայնքի ղեկավարին ներկայացնելուց հետո:

III. ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ

11. Գույքի վարձակալության մրցույթի անցկացման մասին հրապարակային ծանուցումը պետք է հրապարակվի մրցույթի անցկացման օրվանից առնվազն 15 օր առաջ:

12. Գույքի վարձակալության մրցույթի անցկացման մասին հրապարակային ծանուցումը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.

1) մրցույթի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը և ժամը.

2) մրցույթի կազմակերպչի անունը (անվանումը).

3) մրցույթի կազմակերպման վայրը (հասցեն).

4) մրցույթի ձևը և անցկացման կարգը.

5) մրցույթի պայմանները, այդ թվում՝ լոտի (լոտերի) անվանումը, լոտի նկատմամբ սահմանափակումները, եթե լոտն առարկա է, ապա նրա ֆիզիկական վիճակը(մաշվածությունը) և (կամ) արտադրման տարեթիվը, լոտի մեկնարկային գինը, լոտի իրավունք լինելու դեպքում՝ այդ իրավունքի գործողության ժամկետը, ինչպես նաև էական այլ պայմանները.

6) մրցույթի մասնակցության հայտին կից անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, մասնավորապես.

ա. նախավճարի մուծումը հաստատող փաստաթուղթը (անդորրագիրը),

բ. իրավաբանական անձանց համար՝ գրանցման և հիմնադիր փաստաթղթերի պատճենները, իսկ քաղաքացիների համար՝ անձնագրի և սոցիալական քարտի պատճենները՝ բնօրինակների հետ միասին,

գ. հայտատուի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրված լիազորագիր (եթե մրցույթին ներկայանում է լիազորված անձը).

7) մրցույթում հաղթողին որոշելու կարգը.

8) կազմակերպչի կողմից սահմանված նախավճարի չափը, ինչպես նաև վճարման կարգը և ժամկետները.

9) լոտն ուսումնասիրելու ամսաթիվը, ժամանակը և վայրը.

10) ընդհանուր մրցույթի դեպքում՝ լոտերի մրցույթի հերթականությունը.

11) մրցույթի կանոնակարգին ծանոթանալու վայրը և կանոնակարգի պատճենը տրամադրելու կարգը.

12) մրցույթի մասնակցության նախավճարների չափը (մասնակցության նախավճարի չափը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի փետրվարի 22-ի N 125 որոշմամբ սահմանված կարգի 2-րդ կետի համաձայն հաշվարկված՝ գույքի (տարածքի) առնվազն մեկ ամսվա վարձավճարի նվազագույն չափով, կիրառելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 470 որոշմամբ սահմանված գործակիցները կամ տվյալ պահին առկա շուկայական սակագները), ինչպես նաև նախավճարի վճարման կարգը և ժամկետները, մրցույթում հաղթող չճանաչվելու դեպքում նախավճարի հետ վերադարձման կարգը:

Մրցույթի անցկացման մասին հրապարակային ծանուցմամբ կարող են սահմանել լրացուցիչ փաստաթղթեր:

13. Գույքի վարձակալության մրցույթի մասնակցության հայտերի ընդունումը դադարում է գույքի վարձակալության մրցույթի սկսելուց 1 (մեկ) աշխատանքային օր առաջ ժամը 13.00-ին:

14. Գույքի վարձակալության մրցույթի պայմանների փոփոխման դեպքում կազմակերպիչը օրենքով սահմանված կարգով պարտավոր է անհապաղ կատարել մրցույթի մասին հրապարակային ծանուցման համապատասխան փոփոխություններ և (կամ) լրացումներ այն ձևով, ինչպես կատարվել է գույքի վարձակալության մասին մրցույթի հրապարակային ծանուցումը: Հրապարակային ծանուցման փոփոխությամբ թույլատրվում է կատարել լրացում, եթե դրանով չեն փոփոխվում մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված էական պայմանները:

Գույքի վարձակալության մրցույթի էական պայմանների փոփոխման դեպքում անհրաժեշտ է կատարել նոր հրապարակային ծանուցում՝ նախկին ծանուցումը հայտարարելով չեղյալ:

IV. ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

15. Գույքի վարձակալության մրցույթի մասնակցության հայտերը ներկայացվում են գույքի վարձակալության մրցույթի անցկացման մասին հրապարակային ծանուցման մեջ նշված հայտերի ընդունման ժամկետում:

16. Գույքի վարձակալության մրցույթի մասնակցության հայտերը՝ մրցույթի մասնակցության համար անհրաժեշտ փաստաթղթերով, ներկայացվում են անձամբ կամ փոստով՝ պատվիրված նամակով:

17. Գույքի վարձակալության մրցույթի հայտատուները հրապարակային ծանուցմամբ սահմանված կարգով, չափով ու ժամկետներում մուծում են գույքի վարձակալության մրցույթի մասնակցության նախավճար՝ այդ նպատակով բացված մրցույթի մասնակցության նախավճարի դրամային հաշվին:

18. Գույքի վարձակալության մրցույթին մասնակցության իրավունք ձեռք բերած սուբյեկտները գնում են մասնակցի տոմս, որում նշված համարով հանդես են գալիս մրցույթում:

19. Գույքի վարձակալության մրցույթի մասնակից չհամարվող անձանց համար կարող են վաճառվել դիտորդի տոմսեր:

20. Գույքի վարձակալության մրցույթի մասնակցի տոմսերի վաճառքը դադարեցվում է գույքի վարձակալության մրցույթի սկզբից երկու ժամ առաջ, իսկ դիտորդի տոմսերի վաճառքը շարունակվում է մինչև գույքի վարձակալության մրցույթի սկսվելը:

21. Գույքի վարձակալության մրցույթին կարող են մասնակցել հայտ ներկայացնողները կամ նրանց կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով լիազորված անձինք:

22. Գույքի վարձակալության մրցույթում հաղթող ճանաչված հայտատուի նախավճարն ընդգրկվում է մասնակցի կողմից առաջարկված վարձավճարի մեջ:

23. Մրցույթի արդյունքների ամփոփման մասին արձանագրությունը ստորագրելուց հետո կազմակերպիչը գույքի վարձակալության մրցույթում հաղթող ճանաչված անձին տրամադրում է լոտի գինը վճարելու համար հանձնարարագիր /այսուհետ՝ հանձնարարագիր/, որը ստանալուց հետո հաղթող ճանաչված անձը 1 (մեկ) ժամվա ընթացքում վճարում է իր առաջարկած երեք ամսվա վարձավճարի և նախավճարի տարբերություն կազմող գումարը, ընդ որում՝ սույն կետով սահմանված ժամկետում վճարումը չկատարելու դեպքում տվյալ մասնակիցը զրկվում է աճուրդին մասնակցելու իրավունքից, իսկ գույքի մրցույթը վերսկսվում է մեկնարկային գնից:

24. Եթե հանձնարարագիրը ստանալուց հետո հաղթող ճանաչված անձը չի վճարում լոտի գինը սույն կանոնակարգի 23-րդ կետում նշված ժամկետում, ապա հաղթող ճանաչված անձի կողմից մրցույթին մասնակցելու համար վճարված նախավճարը /այսուհետ՝ նախավճար/ չի վերադարձվում, իսկ մրցույթը համարվում է չկայացած:

25. Գույքի վարձակալության մրցույթում հաղթող չճանաչված մասնակիցները 10-օրյա ժամկետում կարող են դիմել գյուղապետարան՝ մրցույթի մասնակցության նախավճարի վերադարձման համար, որից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում դիմումատուին տրվում է մրցույթի մասնակցության նախավճարի հետ վերադարձման հայտ: Սահմանված ժամկետում դիմում չներկայացնելու դեպքում գույքի վարձակալության մրցույթի մասնակցության նախավճարը փոխանցվում է համայնքի բյուջեի համապատասխան հաշվին:

V. ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

26. Գույքի վարձակալության մրցույթն անց է կացնում մրցույթի կազմակերպիչ անդամներից տարիքով ավագը, որը հրապարակում է վարձակալության առաջարկվող գույքը բնութագրող ցուցանիշները, գույքի մեկնարկային վարձավճարի չափը (որը սահմանվում է համայնքի ավագանու կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի փետրվարի 22-ի N 125 որոշմամբ սահմանված կարգի 2-րդ կետի համաձայն հաշվարկված՝ գույքի (տարածքի) առնվազն մեկ ամսվա վարձավճարի նվազագույն չափով, կիրառելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 470 որոշմամբ սահմանված գործակիցները կամ տվյալ պահին առկա շուկայական սակագները), աճուրդային քայլի չափը, որը սահմանվում է գույքի մեկնարկային վարձավճարի չափի 5 տոկոսից ոչ պակաս չափով:

27. Մրցույթի մասնակիցը բարձրացնում է իրեն տոմսին համապատասխանող համարը, որով տալիս է իր համաձայնությունը հայտարարված արժեքով գույքը վարձակալելու մասին:

28. Յուրաքանչյուր մասնակից կարող է գույքի իր կողմից առաջարկվող վարձավճարի չափը ավելացնել մեկ կամ մեկից ավելի քայլերով, կամ քայլի չափից ոչ պակաս գումարով:

29. Կազմակերպիչը շարունակում է մրցույթն այնքան ժամանակ, քանի դեռ չի մնացել առավելագույն վարձավճարի չափն առաջարկված մեկ թեկնածու, որից հետո մրցույթը դադարեցվում է:

30. Գույքի առավելագույն վարձավճարի չափ առաջարկած թեկնածուն Կազմակերպիչի կողմից 3-րդ անգամ առաջարկված վարձավճարի չափը հայտարարելուց հետո ճանաչվում է մրցույթի հաղթող:

31. Կազմակերպիչը 1 (մեկ)-օրյա ժամկետում մրցույթի արդյունքների ամփոփման մասին կազմում է արձանագրություն: Կազմակերպչի անդամի հատուկ կարծիք լինելու դեպքում այն ներկայացվում է գրավոր, որը կցվում է արձանագրությանը և համարվում է դրա անբաժանելի մասը:

32. Կազմակերպիչը գույքի վարձակալության մրցույթի արդյունքների մասին 3 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է համայնքի ղեկավարին՝ ներկայացնելով մրցույթի արդյունքների մասին կազմված արձանագրությունը:

33. Կազմակերպչին մրցույթի մասնակիցների մասին հայտնի դարձած տեղեկությունները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, ենթակա չեն հրապարակման՝ առանց մրցույթի մասնակիցների համաձայնության:

VI. ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԸ ՉԿԱՅԱՑԱԾ ԿԱՄ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼԸ

34. Գույքի վարձակալության մրցույթը համարվում է չկայացած, եթե՝

1) մրցույթի մասնակցության համար ոչ մի հայտ չի ներկայացվել,

2) բացակայում է գույքը մեկնարկային վարձավճարի չափով վարձակալելու համաձայնությունը,

3) գույքի վարձակալության մրցույթում հաղթող ճանաչված անձը (կամ նրա լիազորված ներկայացուցիչը) սահմանված ժամկետներում գույքի վարձակալության մրցույթի արդյունքների արձանագրությունը չի ստորագրել, հետագա վճարումները չի կատարել,

4) օրենքով նախատեսված այլ դեպքերում:

35. Մրցույթն անվավեր կարող է ճանաչվել դատական կարգով: Դատական կարգով մրցույթն անվավեր ճանաչելը հանգեցնում է մրցույթի արդյունքների հիման վրա կնքված պայմանագրի անվավերությանը:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արտիմետ համայնքի գյուղապետարանի
աշխատակազմի քարտուղար Գ. Մովսիսյան

Ձև N 1

ՀԱՅՏ

ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

_____

(հայտը ներկայացնող անձի անվանումը, անունը, ազգանունը, գտնվելու (բնակության) վայրը)

1. Ծանոթանալով «____» _____ 20___թ. կայանալիք մրցույթում վարձակալության տրվող գույքի մասին հրապարակված տեղեկություններին՝ ցանկանում ենք (եմ) մասնակցել

_____ մրցույթին:

(գույքի (տարածքի) գտնվելու վայրը)

2. Մրցույթում հաղթելու դեպքում պարտավորվում ենք (եմ)՝

կազմակերպչի կողմից տրված վճարման հանձնարարագիրը ստանալուց հետո 1 (մեկ) ժամվա ընթացքում վճարել և ներկայացնել վարձակալվող գույքի համար մեր (իմ) կողմից առաջարկված առնվազն երեք ամսվա վարձավճարի և մեկնարկային վարձավճարի տարբերություն կազմող գումարը:

3. Համաձայն ենք (եմ), որ սույն հայտի 2-րդ կետում նշված պայմանների չկատարման դեպքում մեր (իմ) մուծած նախավճարը չվերադարձվի:

4. Մեր (իմ) ռեկվիզիտներն են՝

_____

_____

(իրավաբանական անձի գտնվելու վայրը, հաշվի համարը, ֆիզիկական անձի բնակության վայրը, հեռախոսահամարը)

5. Կից ներկայացնում եմ.

1) հիմնադրի փաստաթղթերի և պետական գրանցման վկայականի պատճենները, պետական գրանցման համարը (իրավաբանական անձանց համար), իսկ քաղաքացիների համար՝ անձնագրի պատճենը, սոցիալական կամ նույնականացման քարտի պատճենը,

2) մուծված նախավճարի անդորրագիրը (տարածքի մեկ ամսվա նվազագույն վարձավճարի չափով, _____ բանկի _____ հաշվի համարով),

3) հայտատուի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրված լիազորագիր (եթե մրցույթին ներկայանում է լիազորված անձը):

Հայտատու (լիազոր ներկայացուցիչ) _____ (ստորագրությունը) _____ (անունը, ազգանունը)

«____» _____ 20___թ.

Կ.Տ.

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Արտիմետ համայնքի ավագանու 2016թ.
հուլիսի 18-ի N 28 Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Հ/հ	Անվանումը	Ժամանա-կահատ-վածը	Դրույքա-չափը (ՀՀ դրամ)
1	հիմնական օբյեկտների համար /1 ք.մ.համար/	ամսեկան	200 /կարող է ավագանու կողմից մեծացվել/
2	մինչև 6 քմ տարածք զբաղեցնող ժամանակավոր (ոչ հիմնական) շինությունների համար /1 ք.մ./համար/	ամսեկան	200/կարող է ավագանու կողմից մեծացվել/
3	6 քմ և ավելի տարածք զբաղեցնող ժամանակավոր (ոչ հիմնական) շինությունների համար/1 ք.մ./համար/	ամսեկան	150/կարող է ավագանու կողմից մեծացվել/

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արտիմետ համայնքի գյուղապետարանի
աշխատակազմի քարտուղար Գ. Մովսիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արտիմետ, (093) 459547, (093) 186297, artimet.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈՒԼԻՍԻ 2016թվականի N 29-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 28-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

1. Հաստատել <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը>> համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետի գյուղական համայնքի ղեկավար Զ. Միրզախանյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող 10-րդ օրը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
2. ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ
3. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՌՈՒԾԱՆՅԱՆ ԱՐՏԱԿ
5. ՍԵԴՐԱԿՅԱՆ ՆԵԼՍՈՆ
6. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՆՎԱՐԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԶԱՎԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի ավագանու
հուլիսի 18-ի 2016 թ N 29 -Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ

Սույն կանոնադրությամբ սահմանվում են Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի տարածքում քաղաքաշինական գործունեության իրականացման առանձնահատկությունները՝ ելնելով համայնքի պատմականորեն ձևավորված ավանդույթների և պատմաճարտարապետական միջավայրի պահպանման անհրաժեշտությունից:

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը, որպես կանոն, մշակվում և հաստատվում է գոտևորման նախագծի կազմում՝ հավելվածի տեսքով:

1.2. Համայնքի ավագանու որոշմամբ քաղաքաշինական կանոնադրությունը կարող է մշակվել նաև մինչև գլխավոր հատակագծի և (կամ) գոտևորման նախագծի մշակումը՝ որպես առանձին փաստաթուղթ: Այս դեպքում կանոնադրությունը կցվում է նախագծային առաջադրանքին և պարտադիր հաշվի է առնվում համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի նախագծման ընթացքում:

1.3. Համայնքի ավագանու կողմից հաստատվելուց հետո քաղաքաշինական կանոնադրությամբ ամրագրված պայմանները ներառվում են համայնքի ղեկավարի կողմից կառուցապատողին տրամադրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքում՝ համապատասխան դրույթներ ամրագրելով առաջադրանքի ձևի «Լրացուցիչ պայմաններ» բաժնում:

II. ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԻ) ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ
(Ճարտարապետության առանձնահատկությունները և շինարարության տեխնոլոգիաները)

2.1. Համայնքի տարածքում գտնվող կարևոր շենքերի և շինությունների ճարտարապետական ոճի, կրկնվող և հաճախ կիրառվող տարրերի, ճակատների ձևավորման առանձնահատկությունների, օգտագործված շինանյութի և կառուցման եղանակի նկարագրությունը:

2.2. Նկարագրությունը հիմնավորվում է համապատասխան լուսանկարներով, գծագրերով:

III. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

3.1. Համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների նկարագրությունը, դրանց ներկայիս վիճակը, վերականգնման ու պահպանման հետ կապված խնդիրները:

3.2. Տվյալները հիմնավորվում են պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակներով, համապատասխան լուսանկարներով:

IV. ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԵՆՔԵՐ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1. Նկարագրվում են համայնքի տարածքում գտնվող համայնքի համար կարևոր նշանակություն ունեցող շենքերը և շինությունները, բերվում են դրանց հետ առնչվող պատմությունները, ներկայացվում են շենքերի և շինությունների ներկա վիճակը, վերականգնման և պահպանման հետ կապված խնդիրները:

4.2. Տվյալները հիմնավորվում են համապատասխան լուսանկարներով, գծագրերով:

V. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԽՐԱԽՈՒՍԿՈՂ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՃԸ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ

5.1. Թվարկվում են այն ճարտարապետական ոճերը, հնարքները, դեկորատիվ տարրերը, ճակատների ձևավորման առանձնահատկությունները, դռների, պատուհանների համաչափությունները, շինարարական նյութերը և կառուցման եղանակը, որոնք պահպանվելու են համայնքի տարածքում և խրախուսվելու են նոր շենքերի կառուցման ժամանակ:

1. Շենքերի և շինությունների ծավալային ու ճարտարապետահատակագծային լուծումներին, ինչպես նաև դրանց առանձին մասերին ներկայացվող պահանջները

ա. շենքի մասշտաբը, ճակատային լուծումներն ու դրանք շեշտադրող տարրերը (զարդաքանդակները, շքամուտքը (պորտալը), որմնախորշերը, շվաքարանները, քիվերը, կամարները և այլն),

.....

բ. շենքի ճակատային մասի արտաքին բացվածքների (դռներ, պատուհաններ, ցուցափեղկեր) ձևավորումը,

.....

գ. շենքի տանիքներն ու շենքերի հորիզոնական հարթությունները («հինգերորդ ճակատ»), ինչպես նաև ճակտոնները (ֆրոնտոնները), մանսարդները, ծեղնանցքները, եզրապատերը (պարապետները) և այլն,

.....

դ. շվաքարանները (տենտերը, մարկիզաները),

.....

ե. շենքի ճակատների և տանիքի հարդարման նյութերն ու երանգավորումը, արտաքին լուսավորությունը.

.....

2. Փողոցների, անցումների, հետիոտն ճանապարհների ու հեծանվաուղիների (ճանապարհային ցանց), հրապարակների, ներքին բակերի, շքաբակերի (կուրդոնյերների) և հարթակների կառուցվածքին ու ձևավորմանը, ավտոկայանատեղիների կազմակերպմանը ներկայացվող պահանջները

ա. ճանապարհային ծածկույթը (նյութը, դեկորատիվ տարրերը և գունային լուծումները),

.....

բ. համայնքն սպասարկող տրանսպորտի համար նախատեսված կանգառների ձևավորումը,

.....

գ. հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի տեղաշարժման համար անհրաժեշտ կահավորանքը (թեքահարթակներն ու հատուկ հարմարանքները՝ լուսային, ձայնային և այլ նախազգուշացման միջոցներով),

.....

դ. ֆունկցիոնալ ձևավորումը, կանաչապատումը և կահավորանքը (փոքր ճարտարապետական ձևեր կամ դեկորատիվ արվեստի նմուշներ, զրուցարաններ, շվաքարաններ, նստարաններ, շատրվաններ, դեկորատիվ ջրավազաններ, կանաչ տնկարկներ, այդ թվում՝ ուղղահայաց կանաչապատում և այլն),

.....

ե. ճանապարհային ցանցին հարող պարիսպների, ցանկապատերի (այդ թվում՝ դալար ցանկապատերի) կառուցվածքին, նյութին ու ձևավորմանը ներկայացվող պահանջները.

.....

3. Լանդշաֆտին, այգեպուրակային շինարարությանը և կանաչապատմանը ներկայացվող պահանջները

ա. ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների և հետիոտն շարժման ակտիվ գոտիների

կանաչապատումն ու բարեկարգումը (փոքր ճարտարապետական ձևեր, ջրային մակերեսներ, շատրվաններ, նստարաններ, տաղավարներ, զրուցարաններ և բարեկարգման այլ տարրեր),

.....

բ. այգեպուրակային շինարարության կազմը (հենապատեր, ծառուղիներ, հարթակներ, աստիճաններ, ինչպես նաև ծառեր, թփեր, սիզամարգեր, ծաղկաթմբեր և գալարվող բույսեր, դեկորատիվ բուսական ծածկույթ, բազմամյա և միամյա բույսերի տեսակներ, կանաչապատման և բարեկարգման այլ միջոցներ),

.....

գ. անհրաժեշտության դեպքում՝ քամու դեմ պաշտպանական գոտու ստեղծման միջոցառումները (ծառատունկ, կանաչ ծածկույթների իրականացում տեղական ավանդական տնկանյութերի տեսակներից՝ տարբեր բարձրության բույսերի զուգակցմամբ),

.....:»:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի

Արտիմետի գյուղապետարանի աշխատակազմի

քարտուղար՝ Գ. Մովսիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արտիմետ, (093) 459547, (093) 186297, artimet.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈՒԼԻՍԻ 2016թվականի N 30

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի հինգերրորդ մասով.

1. Արտիմետ համայնքի բնակիչ Արցախյան պատերազմին կամավոր մասնակցած Աշոտ Ռուբիկի Արզումանյանին տրամադրել 50000/հիսուն հազար/ դրամ օգնություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
2. ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ
3. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՌՈՒԾԱՆՅԱՆ ԱՐՏԱԿ
5. ՍԵԴՐԱԿՅԱՆ ՆԵԼՍՈՆ
6. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՆՎԱՐԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԶԱՎԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ